

Փայլեցնում են գէնք ու զբան,
 Խօսք են ասում սպառնալից:
 Մեր պատինն ու ազատութիւն
 Խելի են ուզում մեզանից, —
 Ահա թէ ինչ խօսք է լսուում
 Հողմայ կայսեր քերանից:

Մեր կորովի քաջ պատանիք,
 Մեր նագելի աղջիկներ,
 Եորան ծառայ պիտի լինիք,
 Եորա կնոջ նածիշտներ . . .
 Մեր հայրենեաց ազատութեան
 Ծառը շուգեց խոնարհել:
 Եւ կատաղած՝ նոքա եկան
 Կամենում են այն կտրել:

Դ՛որս այստեղից, դ՛որս, թշնամիք,
 Էլ ձեզանից ա՛հ չունենք.
 Կորչելու չէ՛ մեր հայրենիք, —
 Եղբայր դարձանք՝ հօգը ենք:
 Մեր թշնամին՝ երկամապատ,
 Իսկ մենք մերկ ենք քնաւին,
 Բայց կը փշրենք մենք կոտ երկւթ,
 Զի դիմանալ մեր ուժին:

Ապտաժներ կը պատառենք
 Եւ անտոիկ լեռներից
 Եորա զլխին մենք կը թափենք,
 Կը հալածենք մեր երկրից . . .
 Տեսէք, եղբարք, լուսին ցոլաց
 Յասուկ, կապոյտ երկնքում.
 Ազատութիւն սուրբ հայրենեաց
 Մաղթենք արդ մեր աղօթքում:

Թարգմ. Յ. Յ.



Ք Ե Ն Ա Գ Ա Տ Ո Ւ Թ Ի Ի Ն .

Н. Я. МАРРЪ. Сказаніе о католикобѣ
 Петрѣ и ученомъ Іоаннѣ Козерѣ. (Изъ сборни-
 ка Факультета Вост. яз. „Восточныя Забѣтки“,
 С.П.Б. 1895. Типогр. Импер. Академіи наукъ).
 Եր. 9—34. fol.

Պետերբուրգի համալսարանի արևելեան բաժնի
 ուսուցչապետ պ. Ն. Մառը անձանօթ չէ հայ բանա-
 սերների, հայկական գրականութեան ասպարիզում

նրա լուրջ հետազոտութիւնները բաւական մութ
 կէտեր են պարզել, որով և մեզ յոյս ներշնչել, որ
 երիտասարդ գիտնականը դեռ ևս մեծամեծ ծառա-
 յութիւններ պիտի մատուցանէ մեր նախնի գրակա-
 նութեան քննութեան գործին: Մեր յոյսերն ի դե-
 րև չեն ելնում արգոյ բանասիրի գրիչը տարէնը
 մի քանի մանրագնին մենագրութիւններ է պար-
 գեում մեզ:

Այս աշխատութիւնը վերաբերում է մեր
 միջնադարեան գրականութեան մութ խնդիրներից
 մէկին, Յովհան վարդապետ Աղղեոնի տեսիլքին և
 նրա այն հեղքերին, որ գտնուում են Մատթէոս
 Առհայեցու ժամանակագրութեան մէջ:

Եթէ մեր դասական գրականութեան շրջանին
 վերաբերեալ շատ խնդիրներ ցայսօր իսկ լուսարա-
 նուած չեն, բայց գոնէ այդ գրականութիւնն հրա-
 տարակուած և յայտնի է, մինչդեռ միջնադարեան
 հարուստ գրականութիւնը մեծ մասով դեռ ևս ան-
 յայտութեան մէջ թողուած է մնում: Քանիցս ա-
 ռիթ ենք ունեցել արգէն յայտնելու, որ այդ ե-
 րևութի պատճառը մասամբ Մխիթարեանների ուղ-
 դութիւնն ու նրանց կրօնական դիտումներն են եղել,
 ուստի այդ մասին նրանցից շատ սպասելիք չունենք
 այլևս և մեզ է մնում այդ անձանօթ աշխարհի
 հետախուզութիւնը: Քանի որ հայ բանասերների
 թիւն այնքան նուազ է և հայ վանքերը անկարող
 են գրական գործունէութիւն ունենալ, միշտ շնոր-
 հասպարտ պիտի լինինք այն օտարականներին, որ
 այդպիսի աշխատանքներ են յանձն առնում:

Մատթէոս Առհայեցու պատմութեան աղ-
 բիւրների մասին այն թիւր կարծիքն է իշխում, որ
 նա առանց գրաւոր աղբիւրների է գրել: այս կար-
 ծիքը հերքուում է յարգելի գիտնականի հետազո-
 տութեամբ, ուր նա ջանացած է ցոյց տալ, որ Առ-
 հայեցին այնքան պատմագիրներից չէ օգտուել, որ-
 քան մեր միջնադարեան գրականութեան մէջ ծաղ-
 կող տեսիլն երիկեղ ծագող ու թիւննե-

Այս կարծիքն հաստատելու համար պ. Մառը
 յառաջ է բերում մի ցարդ չհրատարակուած բնա-
 գիր, որի վերնագիրն է «Տեսիլ ս. վարդապետին
 Յովհաննիսի՝ որ մականունն Աղղեոն կոչէ»: Այս
 հատուածն արտագրուած է մի ձեռագրից, որ գրը-
 ուած է 1320 թիւին և որ գնուած է Արագածի
 հիւսիսային ստորաուում գանուող Հաջի-Խալիլ գիւ-
 ղացի Գալուստ Կիկոզոսովից և որ այժմ գտնուում
 է Ատիական մուսէոնում (Mss. Arm. Marr № 5): Պա-
 րոն Մառը բնագրի հրատարակութեան (7 երեսից)
 կցել է և ուսերէն թարգմանութիւնը, Հետազո-
 տութեանս ներածութեան մէջ հմտալից քննու-

Թեամբ աշխատել է ապացուցանել, որ նախ՝ Յովհանն Աղեղանի տեսիլը մի կեղծագրութիւն (apokryph) է, որ գրուած է ԺԻ. դարում և ըստ ամենայն հաւանականութեան Սև լերան հայ մենաստաններից մէկում: 1147 թուի խաչկրաց պատերազմի շուտափոյթ և յաջող ելքի յուսով, որ և ի դերև չելաւ. երկրորդ՝ որ Մատթեոս Առհայեցին, որի պատմութիւնը հասնում է մինչև 1136 թ., գրել է իւր պատմական երկը 1147 թուից յետոյ և այն էլ բաւական ժամանակ յետոյ, որովհետև այդ ժամանակը տեսիլն արդէն յաւելուածներով հարստացած է: Այլ ևս ձգնել է ապացուցանել, որ Առհայեցին առանձին նպատակով հանգամանքների մէջ է եղել այդ տեսիլան հետ ծանօթանալու վերաբերմամբ: վերջապէս որ նա ծանօթ է եղել անշուշտ այս տեսիլան, եթէ մինչև իսկ ենթադրելու լինինք, որ այդ տեսիլը մի այլ որ Առհայեցուց յետոյ է աւելացրել նրա ձեռագրի մէջ:

Աղեղանցիների և մասնաւորաբար տեսիլների հետքերը մեր պատմական գրականութեան մէջ առանձին ուշադրութեան արժանի են, ուստի առթից օգտուելով յիշենք այս տեղ Ս. Եջմիածնի ձեռագրատան մէջ Յովհաննէս Աղեղանի անուամբ ծանօթ «Հացունեաց խաչի» պատմութիւնը: 26 ագրատանս այդ գրադրի նիւթոց ցանկի մէջ գրուելով Յովհաննէս Աղեղանի «պատմութեան» յիշատակութիւնը, մեր որոնածի փոխարէն գտանք միայն մի գլուխ հետեւեալ մակագրութեամբ. «Պատմութիւն. Յաղագս սրբոյ խաչին. Ար հացունեացն կոչի. Եւ թէ որպէս դարձաւ ի պարսից աշխարհէն խաչն աստուածընկալ: Եւ յայն ժամ մասն ընկալեալ տիկնոջն Սիւնեաց: Աերնագրից յետոյ գլուխըն սկսուում է. ևն. եղև յետ թագաւորելոյն Մարկայ...» Այստեղ լեզունդական ձևով պատմուած է Խորոսի ձեռքով ս. խաչի գերուիլն, ապա Լեռակի ձեռքով ազատուելն և դրանից մի կտոր Սիւնեաց տիկնոջ ընծայուիլն: Յաջորդաբար սրան կից պատմուած է Երուսաղէմի առումն մահմետականների ձեռքով, յունաց Կեոն կայսեր յաղթութիւնը իսլամների վրայ, Թեոդորոս Ռշտունու և Սահակ 2որդիորեցու մասին ճիշդ Կեոնից պատմագրի խօսքերով և վերջապէս Թեոդորոսի որդի Աարդ պատրիկի մասին: Ըմբողջ պատմութիւնն անպայման լեզունդական ձև ունի, Հարունակութեան մէջ ձեռագրում գատարկ տեղ է թողուած և ապա հակիրճ պատմուած է Պետրոս Գետադարձի հրաշագործութիւնն, ուր կայ և աղանու և արծուի գեպքը: Նշանաւոր է այն հանգամանքը, որ այս աւանդութիւնը վերաբերում է Ասպուրական աշխարհին «հուպ ի ծովն Ընդշունեաց», ուր

Աարդ պատրիկը իրրև 1000 եկեղեցիք է շինել տալիս, որոնց օրհնութեան հանգիսի համար ս. Ստեփանոսի նշխար է բերում մի ճգնաւոր Երուսաղէմից:

Արդեօք այս կեղծագիր վանական և ուշ ժամանակ յօրինուած լեզունդական են, որ յայտնի են եղել իրրև պատմագրութիւն Յովհաննէս Աղեղան Տարնացու անուամբ, թէ նա մի պատմութիւն ևս գրել է, ինչպէս աւանդում են նրա մասին, Ինձ առաջինն է հաւանական երևում:

ԱՐՁԱՅՈՒ ՄԱՍՏՆԱՆԱՐԱՆ ԺԸ. Սև ծովու ուսուական եղբքը, Գրեց Վ. Տիւրեան, եր. 190. 4. զինն է 2 ֆրանկ. Վիեննա 1895.

ԺԹ. Գրանսիլուանի ու Նայոց Մեւրապուլի սը կամ նկարագիր Աերլայ հայաբաղարի ի գիր և ի պատկերս, Աշխատարեց Հ. Գրիգորիս վ: Գովրիկեան ի Միս. Ախտէն. երես Թ + 348. 4. 1896. Վիեննա. տպ. Միթարեանց. զինն է 3 ֆր.

Վիեննայի Միթարեան հարց բերան «Հանդէս Ամօրեան» վաղուց է արդէն մասն առ մասն հրատարակում էր այս գրքերն իւր էջերուն մէջ, որ այս տարուան սկզբին աւարտուելով, արդ իրրև առանձին գրքոյիներ ի վաճառ են հանուած: Ազգային կոչուող այս մատենագրանի ԺԸ. հատորը գործ է պ. Վ. Տիւրեանի, որ իրրև դրօսաշրջիկ (tourist) պտած է Սև ծովի ուսուական եղբքներն և առթից օգտուելով հաղորդել է իւր տպաւորութիւններն ու հաւաքած պատահական տեղեկութիւնները: Այդտեղ կան աշխարհագրական, վիճակագրական, պատմական, առևտրական, ժողովրդագրական և ամենատեսակ տեղեկութիւններ, որ կարող են օգտաւէտ լինել ամէն մի դրօսաշրջիկի և ուղևորի համար: Գիրքը նուիրուած է Վիեննայի Միթարեանների ընդհանրական արքայ հ. Արսէն Այտրնեանի յիսնամեայ քահանայական և ուսումնական գործունէութեան, Իրրև տուրիստի յիշատակարան յաջող է կազմուած գիրքս, սակայն թէ ինչո՞ւ համար ազգային մատենագրանի հատոր է կազմում այդ հոսականակի չէ. երևի նրա համար որ ազգային լեզուով է գրուած:

Յիրաւի ազգային մատենագրանի հատոր կազմելու արժանի է երկրորդ գիրքը, որ մեր ազգային ընդարձակածաւալ գաղթականութիւններից մէկի անցեալի և ներկայի պատկերն է: Այս գրքի հետ ծանօթացնելու և գիրքս մեր ընթերցողներին յանձնարարելու համար ամէնից լաւ միջոցն է զնել այստեղ նրա հեղինակի յառաջարանը: «Ընթերցողին առջև գուցէ շատ աչքի դարնող